

Ֆինանսական գրագիտությունը և Հայաստանում վերջինիս բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումները

Ներկայիս բարդ ֆինանսական պայմաններում բավականին կարևոր դեր ունի ֆինանսական գրագիտությունը: Այն օգնում է մարդկանց այնպես տնօրինել սեփական դրամական միջոցները, որպիսի հնարավոր լինի խուսափել անցանկալի ռիսկերից, պարտքերի կուտակումից և հետագա ֆինանսական խնդիրներից:

Բանկերը/ֆինանսական կազմակերպություններն ունեն կարևոր դերակատարում ֆինանսական գրագիտության բարձրացման գործում: Նրանք պարտավորված են պայմանագիր կնքելիս հաճախորդին տրամադրել մանրամասն և հանգամանալից տեղեկատվություն առաջարկվող ծառայության վերաբերյալ: Ուստի առաջնահերթ խնդիր է լրացուցիչ դասընթացների միջոցով բարձրացնել սեփական աշխատակիցների ֆինանսական գրագիտությունը, մասնավորապես այն աշխատակիցների, որոնք անմիջական շփման մեջ են հաճախորդների հետ:

Չնայած ֆինանսական գրագիտությունը չի կատարում սպառողների պաշտպանության դերը, այնուամենայնիվ այն օրենսդրական միջավայրի անքակտելի մասն է կազմում: Ավելին, ֆինանսական գրագիտությունն երբեք այնքան պահանջված և կարևոր չէր եղել, որքան ներկայիս տնտեսական պայմաններում: ԱՄՆ-ից սկիզբ առած “երկրորդային” հիփոթեքային շուկայից բխող ֆինանսական ճգնաժամը ապացուցում է, որ ակնկալվող ռիսկերի վերաբերյալ վարկառուներին տրված անբավարար տեղեկատվությունը, ինչպես նաև չափից ավելի պարտքեր կուտակելու ռիսկերի նկատմամբ վարկառուների անտարբերությունը կարող են բավականին կործանարար լինել:

Ֆինանսական գրագիտության դերն առավելապես կարևորվում է, քանի որ տեղեկատվության տարածման էլեկտրոնային նոր տեխնոլոգիաների զարգացումն ու ֆինանսական շուկաների ինտեգրացիան նպաստում են առաջարկվող ծառայությունների, ինչպես նաև վերջիններիս ներկայացման ձևերի բազմազանության մեծացմանը:

Շատերը դժվարանում են նախապես պլանավորել կամ ընտրել իրենց պահանջներին համապատասխան պրոդուկտ: Դա նշանակում է, որ նրանք պարտքի տակ ընկնելու ռիսկեր են կրում և անձնական որոշ հանգամանքների բերումով հանդիպում են ֆինանսական մեծ դժվարությունների:

Շատ հաճախ մարդիկ գերազնահատում են ֆինանսական ծառայությունների մասին իրենց իրազեկվածության աստիճանը: Ուստի, առաջին հերթին անհրաժեշտ է ֆինանսական գրագիտությունը բարձրացնել այն մարդկանց շրջանում, որոնք տեղյակ չեն, որ իրենք չունեն բավարար տեղեկատվություն ֆինանսական ծառայությունների մասին:

Հայաստանում շուկայական տնտեսության պայմաններում կարևորագույն տեղ է զբաղեցնում սեփական դրամական միջոցների խելամիտ տնօրինման հարցը: Այսօր երկրի տնտեսության առավել արագ զարգացող ոլորտներից է ֆինանսական ոլորտը: Օրըստօրե ավելանում են ֆինանսական գործիքների և կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների թիվը, սակայն սեփական իրավունքների և պարտավորությունների մասին քաղաքացիների անտեղյակությունից բխող ռիսկերը շարունակում են լուրջ խոչընդոտ հանդիսանալ հետագա զարգացման համար: Ներկայումս, Հայաստանի բնակչության մեծ մասը չունի անհրաժեշտ ֆինանսական գիտելիքներ՝ սեփական բյուջեն ըստ հավուր պատշաճի հաշվարկելու և ֆինանսական պարտավորությունները վարկատուի հանդեպ կատարելու համար:

Համաձայն ԱՄՆ ՄԶԳ Էմերջինգ Մարքետս Գրուպ կազմակերպության պատվերով 2008-ին 2007 թվականի համար իրականացված “Հայաստանում ֆինանսական ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության, գրագիտության վստահության և դրանց օգտագործման ու հասանելիության գնահատմանն ուղղված ուսումնասիրության”՝ ներկայումս Հայաստանում բնակչության ֆինանսական


տեղեկացվածության և գրագիտության մակարդակը բավականին ցածր է. նկատվում է ֆինանսական գործիքների մասին տեղեկատվության և վերջիններիս օգտագործման փորձի պակաս:

Չափահաս բնակչության 23%-ի կարծիքով բանկերը կոչված են ծառայելու միայն հարուստներին կամ գործարարներին: Բանկերի կողմից մատուցվող ծառայությունները հասկանալի են կամ բավականին հասկանալի են ՀՀ չափահաս բնակչության միայն 36%-ի համար, իսկ մասնավորապես Երևանում՝ 41%-ի համար:

Հայաստանի չափահաս բնակչության միայն 36%-ն է բանկային համակարգը համարում վստահելի կամ բարձր վստահելի: Երևանում վստահության մակարդակը փոքր ինչ բարձր է՝ 38.5%: Հետազոտության համաձայն՝ եկամտի աճին զուգընթաց աճում է նաև բանկային համակարգի հանդեպ վստահությունը: Վերոհիշյալ թվերից կարելի է եզրակացնել, որ վստահում են նրանք, ովքեր հասկանում են:

Ցածր է նաև բանկային տարբեր ծառայությունների մասին իրազեկվածության աստիճանը: Բնակչության մոտ նկատելի է համեմատաբար բարձր տեղեկատվություն վարկերի վերաբերյալ(տես գծ.1), սակայն դա սահմանափակվում է ընդհանուր պատկերացումներով:


Գծ. 1 Հիմնական բանկային ծառայությունների մասին իրազեկվածությունը, ընդամենը չափահաս բնակչության նկատմամբ, տոկոս



Աղբյուրը: ՖՕԻԳՎՕՀ ՏՏ Ընտրանքային Վիճակագրական Հետազոտություն , ՏՁՀԿ 2008

Վարկ ունի բնակչության ընդամենը 8.2%-ը:

Գծ.2 Առնվազն մեկ տեսակի վարկ ունեցող բնակչության բաշխվածությունն ըստ գրագիտության մակարդակի, % ընդամենը բնակչության նկատմամբ:




Աղբյուրը: ՖՕԻԳՎՕՀ ՏՏ Ընտրանքային Վիճակագրական Հետազոտություն , ՏՁՀԿ 2008

Շատ ցածր է բանկային հաշիվներ և քարտեր ունեցողների թիվը, որոնք կազմում են համապատասխանաբար 8% և 6%: Պլաստիկ քարտ ունեցողների 88%-ը քարտերն օգտագործվում են աշխատավարձի գումարները կանխիկացնելու նպատակով:

Բանկային հաշիվ չունենալու հիմնական պատճառը պատասխանողները համարում են

անհրաժեշտության բացակայությունը (տես Գծ.3):

Գծ. 3 Բանկային հաշիվներ չունենալու հիմնական պատճառները, տոկոս (1-ից ավել պատասխան)



Աղբյուրը: ՖՕԻԳՎՕՀ ՏՏ Ընտրանքային Վիճակագրական Հետազոտություն, ՏՁՀԿ 2008

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ բանկային համակարգում ներգրավված բնակչությունը բավականին գոհ է բանկերի սպասարկումից:

Օր.՝ Բանկային հաշիվ ունեցողների մոտ 10%-ը շատ գոհ է, իսկ շուրջ 72%-ը՝ գոհ իրենց սպասարկող բանկերից:

Հայաստանում բավականին ցածր է արժեթղթերի շուկայի մասնակիցների և հիմնական գործիքների մասին բնակչության իրազեկվածությունը. արժեթղթեր ունի բնակչության ընդամենը 0.5%-ը, իսկ բնակչության զգալի մասն էլ դժվարանում է գնահատել արժեթղթերի նկատմամբ սեփական վստահության մակարդակը, որը ևս բխում է ֆինանսական գրագիտության պակասից:

ՀՀ բնակիչներն առավել տեղեկացված են պետական պարտատոմսերի մասին՝ 43%: Մասնավոր արժեթղթերի (21%) համեմատ այս գործիքի հանդեպ վստահությունը բարձր է՝ մոտ 33%: Այնուամենայնիվ, բնակչությունը դեռևս լավ չի պատկերացնում, թե ինչպես կարելի է ձեռք բերել և տնօրինել պետական պարտատոմսերը:

Բնակչության ընդամենը 2%-ն է օգտվում որևէ տեսակի ապահովագրական ծառայությունից: Ամենատարածված ապահովագրության տեսակն անշարժ գույքի ապահովագրությունն է՝ 42%, իսկ կյանքի/առողջության և ավտոմեքենայի ապահովագրությունները կազմում են համապատասխանաբար 36% և 27%:

Միջազգային փորձը: Միջազգային տարբեր հայտնի կազմակերպություններ տարբեր երկրներում քայլեր են ձեռնարկել բարձրացնելու տեղի բնակչության ֆինանսական գրագիտությունը:

CitiGroup-ը 10 տարիների ընթացքում \$200մլն է ներդրել աշխարհի 100 երկրներում ֆինանսական գրագիտության բարձրացմանը նվիրված տարբեր ծրագրերում, որից միայն \$2.5մլն-ը հատկացվել է Ռուսաստանին: VISA-ն այս ուղղությամբ բավականին մեծ աշխատանք է կատարել ՌԴ-ում, մասնավորապես՝ բնակչության լայն խավերի համար VISA-ի ռուսական վեբ կայքում ստեղծել է “Իմ խելացի դրամները” վերնագրով բաժին, երեխաների համար այլ երկրներում Visa CEMEA-ի օրինակով նախաձեռնել է համակարգչային խաղի մշակում, իսկ ուսանողների համար կազմակերպել հատուկ կրթական սեմինարներ: VISA-ն CitiGroup-ը և IBLF-ը ռուսալեզու մարդկանց համար ստեղծել են www.azbukafinansov.ru կրթական պորտալը: VISA և MasterCard-ը Ռուսաստանում զբաղվում են առևտրային կետերի աշխատակիցների համար պլաստիկ քարտերի օգտագործմանը նվիրված միջոցառումների կազմակերպմամբ: MasterCard-ը Ռուսաստանում կազմակերպում է սեմինարներ բանկերի աշխատակիցների համար:

Ֆինանսական կազմակերպություններից զատ ֆինանսական գրագիտության բարձրացման գործում առաջնային տեղ են զբաղեցնում նաև տարբեր երկրների կողմից

առաջադրված պետական ծրագրերը:

Ռուսաստանը ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված ծրագրին հատկացնում է \$100մլն., որից \$10մլն.-ը միայն հատկացվում է համաշխարհային բանկի միջոցներից՝ որպես 5 տարվա ծրագիր: Ավստրալիայում դեռևս 2004 թվականին կառավարության որոշմամբ ստեղծվել էր աշխատանքային խումբ, որի նախաձեռնությամբ 2005 թվականի ստեղծվեց ֆինանսական գրագիտության հիմնադրամը: Իսկ Անգլիան տարեկան \$20մլն. ծախսում է ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված ծրագրերի համար:

Հայաստանում ֆինանսական գրագիտության բարձրացման հնարավոր լուծումները:

Որպես գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների հիմնական թիրախային խմբեր՝ կարելի է առանձնացնել դպրոցականներին, ուսանողներին, ուսուցիչներին, թոշակառուներին, դատավորներին, քննիչներին և լրագրողներին:

Ներկայիս վիճակը բարելավելու, ազգաբնակչության ֆինանսական գրագիտությունը և ֆինանսական շուկայում բնակչության ակտիվությունը բարձրացնելու համար նպատակահարմար կլինի ստեղծել հատուկ ֆոնդ՝ այս ուղղությամբ մրցութային կարգով գրանտերի տրամադրման համար:

Ուսանողների և դպրոցականների համար անհրաժեշտ կլինի մշակել մանկապատանեկան խաղերի և վիկտորինաների տեսքով հատուկ հեռուստա և ռադիո հաղորդումներ, կազմակերպել կրթական ամառային ճամբարներ և դպրոցական դասագրքային խնդիրներում կատարել որոշ փոփոխություններ՝ այնտեղ ներառելով ֆինանսական գործիքներին առնչվող իրական օրինակներ: Նպատակային կլինի նաև ֆինանսական տարբեր կառույցներից պարբերաբար մասնագետներ հրավիրել ֆակուլտատիվ դասընթացներ անցկացնելու համար, իսկ դպրոցի պատերը զարդարել նկարազարդ կրթական պլակատներով:

Անհրաժեշտ կլինի ուսանողների համար մշակել «Ընտանեկան բյուջեի պլանավորման» ուղեցույց ֆինանսական առանձին գործիքների վերաբերյալ, ոչ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպել դասախոսություններ բանկերի և ֆինանսական այլ կազմակերպությունների մասնագետների մասնակցությամբ և ապահովել լրացուցիչ պրակտիկա ֆինանսական տարբեր կառույցներում: Պարբերաբար կարելի է կազմակերպել թեմատիկ կոնֆերանսներ, սեմինարներ ու մրցույթներ, իսկ ԲՈՒՀ-երի ուսանողական թերթերում տպագրել ֆինանսական թեմաներով հոդվածներ:

Շատ կարևոր թիրախային խումբ են հանդիսանում նաև ուսուցիչներն ու դասախոսները: Նրանց անմիջական մասնակցությունից և ֆինանսական գրագիտությունից է կախված վերոհիշյալ երկու թիրախային խմբերի համար միջոցառումների արդյունավետությունը:

Նրանց համար ևս անհրաժեշտ կլինի կազմակերպել հատուկ վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, գործնական պարապունքներ, ապահովել ֆինանսական ոլորտի մասնագետների կողմից խորհրդատվություն և մշակել ֆինանսական գործիքների մասին ուղեցույցներ՝ online և տպագիր:

Թոշակառուների համար ևս նպատակահարմար կլինի մշակել ռադիո և հեռուստա հաղորդումների շարք՝ կուտակային միջոցները (ավանդների տեսակներ, կենսաթոշակի հաշվարկ և այլն) ճիշտ տնօրինելու և խաբեություններից զերծ մնալու համար: Նրանց համար կարելի է կազմակերպել բանկերի մասնագետների մասնակցությամբ հատուկ բացատրական դասընթացներ: Ավանդների տեսակների, տոկոսադրույքի հաշվարկի և այլ թեմաներով բացատրական ուղեցույցները նույնպես օգտակար կլինեն այս թիրախային խմբի համար:

Դատաիրավական համակարգի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակային է **դատավորների ու քննիչների** համար կազմակերպել հատուկ կրթական դասընթացներ և մշակել տեղեկատվական ուղեցույցեր:

Լրագրողները կարևորագույն տեղ են զբաղեցնում ֆինանսական գրագիտության

բարձրացմանը նվիրված այս ամբողջ միջոցառումների շարքի լուսաբանման գործում: Նրանց համար ևս անհրաժեշտ կլինի կազմակերպել սեմինարներ և պատրաստել տեղեկատվական նյութեր:

Կարևոր կրթական նշանակություն ունի նաև սոցիալական գովազդը: Անհրաժեշտ կլինի ինտերնետի, գովազդային տաղավարների, տեղեկագրերի, հեռուստատեսության, ռադիոյի և տպագիր մամուլի միջոցով իրականացնել բացատրական գովազդային արշավներ/ակցիաներ ֆինանսական գործիքներից օգտվելու եղանակների և նրանց առավելությունների մասին: Այս ակցիաներն ուղղված կլինեն հասարակության բոլոր խմբերին:

Հայաստանի բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված որոշ աշխատանքներ արդեն իսկ կատարվել են: Հայաստանի բանկերի միությունը Արարատ FM-ի հետ համատեղ պատրաստել է ֆինանսական ոլորտին առնչվող տարբեր թեմաներով կրթական ռադիոհաղորդումների շարք, ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսական Ոլորտի Զարգացման Ծրագիրը մշակել է ֆինանսական տարբեր թեմաներով կրթական ուղղեցույցներ: Իսկ վերջերս, այս հոդվածի մշակման ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկը հանրությանը ներկայացրեց “Ֆինանսներ բոլորի համար” կայքը՝ www.abcfinance.am:

Ամփոփելով կարելի է ասել, որ հետևելով միջազգային լավագույն փորձին և տանելով ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղությամբ շարունակական աշխատանքներ ժամանակի ընթացքում կունենանք ֆինանսապես կրթված բնակչություն, հետզհետե կավելանա ֆինանսական տարրաբնույթ և բարդ գործիքների լայնածավալ օգտագործումը, կբարձրանա վարկերի վերադարձելիությունը և կձևավորվեն երկար փողեր: Այս ամենն էլ իրենց հեթին կխթանեն ֆինանսական համակարգի կայունացմանն ու զարգացմանը: Եվ վերջապես, ունենալով ֆինանսապես գրագետ հասարակություն և կայուն բանկային ու ֆինանսական համակարգ՝ մենք բավականին արագ կարող ենք իրակագործել վերջին տարիներին բազմիցս քննարկվող Հայաստանը տարածաշրջանի ֆինանսական կենտրոն դարձնելու գաղափարը:

Հայաստանի բանկերի միություն